

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

252

Ա. ԴԱՆԻԵԼ ԲԵԿ

ՍԻԼՈՍԸ —
ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ
ՏՐԱԿՏՈՐ

ՊԵՏԱԿԱՆ Ա. Տ.

1931


ԵՎՐԵՎԱՆ

686

14 SEP 2017
37

Ա. ԳՈՅՔԻ ԲԵԿ

ՍԻԼՈՍԸ -
ԱՆԱՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ
ՏՐԱԿՏՈՐ



ՊԵՏՎԵՑ

1931

ՏԵՂՄԱՆ

ԿԵՐԻ ՊԱՇԱՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԸ

Խ. Հայաստանի անասնաբուծության զարգացման արդելքներից ամենագլխավորը կերի պակասն ե: Մեր շատ շրջաններում անասունն ստանում է անհամեմատ ավելի քիչ կեր, քան նրան հարկավոր ե իր կենսական կարիքների համար: Պարզ ե, վոր այսպիսի պայմաններում, անասունից պահանջել բարձր արդյունավետություն անհնարին ե: Հաճախ գյուղացիք կերի պահանության պատճառով ստիպված են լինում իրենց անասունը ծախել չափազանց եժան գնով: Սովորաբար կերի սուր պակասություն է զգացվում գարնանը: Հետևաբար անասունների քանակի ավելացման և նրանց արդյունավետության բարձրացման գլխավոր պայմաններից մեկը նրանց համար ժամանակին և բավարար քանակությամբ կեր հայթայթելն ե: Մեր խոտհարքները չափազանց ուժապառ են յեղել: Ամեն տարի մենք խոտհարքներից հավաքում ենք բերքը, իսկ նրանց լավացնելու համար վոչ մի միջոց ձեռք չենք առնում: Այդ պատճառով ել նրանց բերքատվությունը տարեց-տարի ընկնում ե: Տնտեսության մեջ կերի պաշարը շատացնելու համար անհրաժեշտ է կաղմակերպել կերի պատրաստման գործը:

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐ. № 1592
ԳՐԱՓԵԹ. 6179 (Բ)
ՊԱՏՎԵՐ 1930
ՏԻՐԱԲ 6000.



1-5814 97

Դրա համար պետք ե լավացնել խոտհարքները՝
ազատելով նրանց քարերից, մոլախոտերից ու
թունավոր բույսերից։ Պետք ե փոցինել ու պա-
րարտացնել խոտհարքներն ու արոտատեղերը։
Պետք ե ընդարձակել խոտաբույսերի ու արմա-
տապտուղների ցանքի տարածությունները և
վերջապես ուղղիոնալ կերպով ոգտագործել
ճակնդեղի, կարտոֆիլի, յեղիպտացորենի, ա-
րեվածաղկի և այլ բանջարեղենների մնացորդ-
ները։ Այս մնացորդները կարող են դառնալ
ոգտավետ ոժանդակ կեր տարդյունավետ և լվծ-
կան անասունների համար, յեթե կանոնավոր
ոգտագործվեն։ Ներկայումս մեզ մոտ այդ մը-
նացորդները դեռևս քիչ են ոգտագործվում,
վորպես կեր։ Նրանց մեծ մասը տրորվում է
անասունների վորքերի տակ կամ մնում է
դաշտում և փչանում։

Յեթե Խ. Հայաստանի բանջարանոցային
բույսերի, ճակնդեղի, յեղիպտացորենի, արե-
վածաղկի ցանքսերի տարածությունն ընդու-
նենք մոտ 15 հազար հեկտար (իսկ այդ տարա-
ծությունը տարեց-տարի այլելանում է) և հաշ-
վենք, վոր ամեն մի հեկտարից կարելի յե
ստանալ մոտ 2 տոնն մնացորդ, դուրս կդա,
վոր ամեն տարի մենք կորցնում ենք մոտ
30 հազար տոնն բավականի արժեքավոր ու
աննդատու կեր։ Պակաս կեր չենք կորցնում ա-
մեն տարի նաև վատ յեղանակների պատճա-
ռով, յերբ հնարավորություն չենք ունենում
հավաքել մեր բանջարանոցների ամբողջ բեր-

քը։ Վերջապես արտերի միջնակներում, հա-
րուսներում, չենքերի և բնակարանների շուրջը,
գետերի ու առուների ավերին և ճահճում տե-
ղերում բուսնում և մեծ քանակությամբ կանաչ
մասսա (մոլախոտեր, ճահճային բույսեր, յե-
ղեգն (զամիչ), քոլ ու կոպիտ խոտեր), վորը
գժվար և կամ ձեռնտու չե չորացնել և դարձ-
նել խոտ, իսկ թարմ գրությամբ կենդանիները
չեն ուտում։ Ահա այս բոլոր տիպի բույսերն
ու մնացորդները կարելի յե հավաքել և սիլո-
սացման միջոցով դարձնել հյութալից, համեզ
ու սննդարար կեր և ոգտագործել ամբողջ տար
վա ընթացքում։ Այսպիսով կավելանա կերի
սչաշարը և մեր անասունները վոչ միայն սո-
ված չեն մնա, այլև կրաքանա նրանց ար-
դյունավետությունը։ Մեր Միության շատ
խորհրդային ու կոլեկտիվ տնտեսություններ
արդեն փորձով համոզվել են, վոր սիլոսացու-
մը կերի պաշարի ավելացման ամենակարեվոր
և ձեռնտու միջոցներից մեկն է։

ՍԻԼՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կերի սիլոսացումը մեզ համար ունի խո-
շոր տնտեսական նշանակություն։ Դրա մի-
ջոցով կաւծեղանա և կլավանա խորհրդային և
կոլտնտեսությունների կերի բազան և կամրա-
նա նրանց անտեսական գրությունը։

Կերի սիլոսացման դիմավոր ոգումները
հետեւյալներն են՝

1. Սիլոսացման միջոցով Հնարավոր և լինում թարմ դրությամբ ուտելու համար անհարմար բույսերը, բանջարանոցային մնացորդները և այլն դարձնել արժեքավոր, սննդատու և հյութալից կեռ:

2. Կանաչ բույսերից սիլոս պատրաստելու գեղքում նրանց միջի սննդարար նյութերից առվելի քիչ կորուստ և լինում, քան թե իբրև խոտ չորացնելիս։ Չորացրած խոտը տեղափոխության ժամանակ զրկվում է իր քնքույշ և սննդարար մասերից (տերեվներից), վորոնք հեշտությամբ փշրվում ու թափվում են։ Իսկ յերբ անձրես տակ մնում է, կորցնում է իր դուրեկան հոտն ու գույնը։ Մինչդեռ սիլոսելիս ստացվում է լավ համ ու հոտ ունեցող հյութալից կեր, վորն անառուններն ուտում են մեծ ախորժակով։

3. Սիլոսը շատ լավ և ազդում կենդանիների թե մարսողության և թե ընդհանրապես առողջության վրա։ Սիլոսն ունի թեթև լուծող հատկություն և ստամոքսի վրա ազդում է կանաչ խոտի նման։

4. Սիլոսելու միջոցով Հնարավոր և լինում անառուններին ամբողջ տարին ապահովել կանաչ հյութալից կերով։

5. Մեկ հեկտար տարածությունից ստացված բերքից սիլոս պատրաստելիս 2 անգամ ավելի շատ անառուն կարելի յե պահել, քան թե խոտ դարձնելու դեպքում։

Ի՞նչ ե Սիլոսը Յեզ Ի՞նչՊես և ՆԱ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ

Սիլոսը թթվեցրած կեր և, ճիշտ այնպես, ինչպես թթու դրած կաղամբը, վարունգը և այլն։ Յերբ մենք թարմ ու կանաչ բույսերը կոտորում լցնում ենք հորերի կամ ուրիշ կառուցվածքների մեջ, ապա տրորելուց ու նստացնելուց հետո բերանը պինդ փակում ենք, վորոշ ժամանակից հետո ստացվում է մի տեսակ թթվու կեր, վորը կօչիլում է սիլոս։

Ի՞նչ ե ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ՍԻԼՈՍԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Սիլոս պատրաստելու նպատակով մանրացված և հորի մեջ լցված կանաչ թարմ բույսերի առանձին բջիջները դեռ շարունակում են չնչել։ Դրա համար նրանք ողից վերցնում են թթվածին, նրա միջոցով իրենց մեջ դռնվող ուրան վերածում են չաքարի։ Ողից վերցրած թթվածինի փոխարեն նրանք արտահնչում են ածխաթթու գազը։ Յերբ ողի թթվածինը համարյա վերջանում է, նրանք ել մեռնում են։ Միաժամանակ այդ մասսայի մեջ աշխատում են զանազան բակտերիաներ, վորոնց զործունելությունը ուժեղանում է այն ժամանակի, յերբ բույսերի բջիջները մեռնում են։ Նրանք սկսում են քայլքայել այդ բջիջները և նրանցով սնվել։ Այդ բակտերիաների գործունելության հետեւ վանքով սիլոսի մեջ առաջ են գալիս զանազան

թթուներ: Տարբեր բակտերիաներ տարբեր թւթուներ են առաջ բներում : Արինակ, կան բակտերիաներ, վարոնք առաջ են բներում կաթնաթթու (մածնի թթվի նման), իսկ մյուսները քացախաթթու կոմ յուղաթթու:

Սակայն վորոշ ժամանակից հետո թթվի բանակը սիլոսի մեջ այնքան է չառանում, վոր հենց իրենք բակտերիաները նրա աղդեցությունից մեռնում են: Դրանից հետո սիլոսի սննդաբար նյութերի քայլքայումը կանդ և տունում և սիլոսած մասան կոնսերվի նման կարող և առանց փչանալու գիմանալ մի քանի տարի:

Բացի աղից բակտերիաների զարգացման համար մեծ նշանակություն ունի ջերմությունը. տարբեր բակտերիաներ տարբեր աստիճանի ջերմության ժամանակ են լավ զարգանում: Մեզ համար ցանկալի կաթնաթթվային բակտերիաները կարող են զարգանալ սկսած 10 աստիճանից մինչև 45 աստիճան Յ:

Կա սիլոսացման յերկու յեղանակ՝ տայ սիլոսացում և սառը սիլոսացում:

Տաք սիլոսացման ժամանակ հորը կամ աշտարակը միանդամից չեն լցնում. նախ լցնում են մոտ 1 մետր շերտ կանաչ մասսա, առանց տրորելու թողնում են մոտ մեկ որ, մինչև վոր նրա ջերմությունը հասնի 50 աստիճանի, ապա լցնում են ելի մի շերտ և թողնում, և այսպես շարունակում են մինչև հորի լցվելը, վորից հե-

տո տրորում— պնդացնում են և յերեսը ծածկում:

Սառը սիլոսացման ժամանակ մասսան հորի մեջ են լցնում առանց ընդմիջումների և լավ պնդացնում: Այս գեղագում սիլոսի ջերմությունը հասնում է ամենաշատը մինչև 30 աստիճանի:

Տաք սիլոսացման ժամանակ սիլոսի սննդաբար նյութերի քայլքայումն ավելի ուժեղ ու արագ է կատարվում, վորը ցանկալի չե: Այդ տեսակետից սառը սիլոսացումն ավելի ձեռնտու յե:

ԵՆՉԻ ՄԵԶ ԵՆ ՍԻԼՈՍ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Սիլոս պատրաստում են հորերի (փոսերի), խրամատների, աշտարակների և կիսաաշտարակների մեջ: Այդ բոլորը կոչվում են սիլոսային կառուցվածքներ: Հորերն ու խրամատները վնում են ամբողջապես հողի մեջ, աշտարակներն՝ ամբողջովին հողից դուրս, իսկ կիսաաշտարակները կիսով հողի մեջ, կիսով՝ դուրս:

ՍԻԼՈՍԱՅԻՆ ԽՐԱՄԱՏՆԵՐ


Սիլոսային կառուցվածքներից ամենապարզը և քիչ ծախսեր պահանջողը խրամատներն ու խրամատներին յերկարավուն վոսի ճե: Սրա առավելություններից մեկն ել այն է, վոր կարելի յե պատրաստել հենց այն մեծության, վորը անհրաժեշտ է տվյալ տնտեսության հա-

մար: Խրամատի պատերը կարելի յե շինել թեք (դեպի գուրս) և թե ուղիղ (դիք): Թեք պատերը ավելի դիմացկուն են լինում: Խրամատի խորությունը սովորաբար լայնությունից 1 և կես անգամ ավելի յե լինում և հասնում ե յերթեմն 3 մետրի, յեթե դեսնի տակի ջրերը մոտ չեն: Իսկ խրամատի յերկարությունը կախված ե սիլոսացու մասսայի քանակից: Այսպիս, վոր սկետք ե նախավես գիտենալ, թե տնտեսությունը վորքան սիլոսացու մասսա պետք ե ունենա, վորպեսզի ըստ այնմ ել վորոշի նրա յերկարությունը: Խրամատի ամենաշատ յերկարությունը կարող ե լինել 30 մետր: Դրանից ավելի յերկար շինել խորհուրդ չի տրվում: Յեթե մասսան շատ ե, այդ դեպքում կարելի յե 2 խրամատ շինել իրար զուղահեռ: Մեկ խորանարդ մետր սիլոր հավասար ե մոտավորապես կես տոննի: Հետեվաբար յեթե խրամատի խորությունը 3 մետր ե, լայնությունը 2 ե կես մետր, իսկ յերկարությունը 10 մետր, ուրեմն նրա տարողությունը կլինի 75 խոր. մետր (2×3 , 5×10) և նրա մեջ կարելի յե տեղավորել 37,5 տոնն սիլոսած կեր:

ՍԻԼՈՍԻ ՀՈՐԵԲԸ

Խրամատից հետո իր պարզությամբ և ետանությամբ աչքի յե ընկնդրմ հորը, վորը լինում ե կլոր, քառակուսի, ութանկյունանի և այլն: Դրանցից ամենալավը կլորն ե:


Հորը կարելի յե պատրաստիլ գանադրան մեծության: Հորի խորությունը սովորաբար տրամադից $1\frac{1}{2}$ անգամ մեծ ե լինում: Հորի պատերը պետք ե լինեն ուղիղ և հարթ. պատերը ձեռնտու յե սվաղել կավով, իսկ յեթե հորի հողը թույլ ե և թափվում ե, կարելի յե պատերն ամրացնել կամ տախտակներով՝ ամուր իրար կպցնելով կամ թե քարե պատ շարելով և հետո 2-3 սանտմ. հաստությամբ կավ կամ ցեմենտ քսելով:



Նկ. 1. Սիլոսի ՀՈՐ. 1. Սիլոս, 2. Դաբան, 3. Կավ, 4. Հող.

Սիլոսի հորերի համար պետք ե ընտրել բարձր տեղ, վորպեսզի գետնի տակի ջրերը

մոտ ըինեն և անձրեվի և ձյան ջրերը վոչ մի
կերպ մեջը ըցվեն: Անհրաժեշտ և նաև հորի
շուրջը փորել առու՝ անձրեվի և ձյան ջրերի
հոսելու համար: Անձրեվիներից ու ստուամա-




Նկ. 2. ՍԻԼՈՍԻ ՀՈՐ ԾԱԾԿՈՎ. 1. Սիլոս, 2. Գար-
ման, 3. Կավ, 4. Հող

նիքներից պաշտպանելու համար ցանկալի յե
հորի վրա ծածկոց կառուցել: Յ մետր խորու-
թյամբ և $2\frac{1}{2}$ մետր տրամադրով հորի մեջ
կարելի յե տեղավորել մինչեւ 10 տոնն կեր,

կորով կարելի յե կերակրել մինչեւ 5 դլուխ խո-
չոր անասուն:

Սիլոսի հորը (ինչպես նաև մյուս կառուց-




Նկ. 3. ՍԻԼՈՍԻ ՔԱՐԱՃԵՆ ՀՈՐ
1. Սիլոս, 2. Գարման, 3. Կավ, 4. Հող

վածքները) պետք ե շինել գոմին շատ մոտիկ,
վորպեսզի ամեն որ սիլոս հանել և գոմ տանելը
շատ ժամանակ և աշխատանք չպահանջի:

ԿԻՍԱԱՇՏԱՐԱԿ

Կիսաաշտարակը փոսի ձև ունեցով մի
կառուցվածք ե, վորի կեսը կամ փոքր մասը
հողի մեջ ե, իսկ մնացած կեսը կամ մեծ մասը


գտնվում ե Հողից դուրս։ Մեր պայմաններում՝
տմենից լավն ե կիսաաշտարակի հողից դուրս
գտնվող մասը շինել ամբողջապես քարից, իսկ
հողի մեջ գտնվող մասը չըջապատել քարով։
Կիսաաշտարակի պատերը նույնպես պետք ե
լինեն ուղղահայաց։ Ցանկալի յե, վոր կիսա-



Նկ. 4. Սիլոսի քարսեն չոր տաժկով.
1. Սիլոս, 2. Քարման, 3. Կավ, 4. Հող

աշտարակը կլորաձեվ լինի, վորովհետեւ այդ
դեպքում ծախսերը կը ճատվում են 20 տոկո-
սով։ Կիսաաշտարակի ընդհանուր խորությու-

նը կարելի յե հասցնել մինչեւ Շմետրի, իսկ
տրամագիծը՝ 4 և կես մետր։ Այդ մեծության
կիսաաշտարակի ծավալը հասնում է 110 խո-
րանարդ մետրի և նրա մեջ կարելի յե տեղա-
փորել մինչեւ 70 տոնն կեր։ Ընդհանրապէս
պետք ե աշխատել, վոր կիսաաշտարակի գետ-



Նկ. 5. Սիլոսի քարսեն կրսսածարսակ
1. Սիլոս, 2. Քարման, 3. Կավ, 4. Հող

նի մեջ գտնվող մասի խորությունը 3 և կես
մետրից ավել չլինի, իսկ տրամագիծը՝ ընդ-
հանուր խորությունից պակաս լինի 1 և կես

անդամ : Կիսուաշտաբակի ներքին պատերը սովորաբար սվաղում են ցեմենտով : Անձրեվից ու ցրտերից պաշտպանելու համար պետք է շինել ծանկոց : Մածկոցը կարելի յե պատրաստել յեղեղնից կամ չորացած ծառի ճյուղերից՝ վրան հող լցնելով : Կարելի յե պատրաստել նաև ուրիշ ավելի եժան նյութերից :

ՍԻԼՈՍԻ ԱՇՏԱՐԱԿ


Բոլոր տեսակի սիլոսային կառուցվածքներից համեմատաբար ավելի բարդը, մեծածավալը և թանգարժեքը աշտարակն է : Աշտարակը շինվում է ամբողջովին գետնից վեր : Ծինում են փայտից, աղյուսից, քարից և բետոնից : Աշտարակի ծավալը հասնում է 500-800 խ. մետրի և կարող է պարունակել 300-500 տոնն կեր :

ՎՈՐ ՍԻԼՈՍԱՅԻՆ ԿԱՌՈՒԹՎԱԾՔՆ Ե ՄԵԶ
ՀԱՄԱՐ ԱՎԵԼԻ ԸՆԴՈՒՆԵԼԻ

Վորպեսզի պարզենք, թե սիլոսային կառուցվածքներից վո՞րն է մեր պայմաններում ավելի ընդունելի, պետք է ինկատի ունենանք մեր կլիմայական պայմանները, շինարարական նյութերի տեսակն ու քանակը, կառուցվածքի հժանությունը և այլն : Այդ տեսակետից մեր պայմանների համար քիչ են հարմար սիլոսային աշտարակները, վորոնք թանդ են նստում, պահանջում են այնպիսի շինարարա-

կան նյութեր, վորոնք դժվար են ճարվում : Նրանց կառուցման ժամանակ հարկավոր ե տեխնիկական հսկողություն և վորակավոր արհեստավորներ : Բայց այդ մեր ցուրտ լեռնային շրջաններում աշտարակի սիլոսը կարող

1-ՃՑ/ԿՊ



Նկ. 6. ՍԻԼՈՍԻ ԱՇՏԱՐԱԿ

ե սառչել : Ճիշտ նաև աշտարակն ունի մի շաբաթ գրական կողմեր (նրան սիլոսն ավելի լավ է լինում, ավելի շատ մասաւ կարող ե տանել և

այլն), սակայն վերոհիշյալ պատճառներով
առայժմ դժվարանում ենք հանձնարարել մեր
խորհրդային և կուեկտիվ տնտեսություն-
ներին:

ԻՆՉԻՑ ԿԱՐԵԼԻ ՑԵ ՍԻԼՈՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ

Ինչպես հիշեցինք, սիլոս կարելի յե պատ-
րաստել բանջարանոցների մնացորդներից,
այն և՝ կարտոֆիլի, ճակնդեղի, կաղամբի,
պամիլորի տերեվներից, արեվածաղկի ցո-
ղուններից ու տերեններից, վարունգի, գղումի,
ձմերուկի կեղևներից, մոլախուերից, ճահ-
ճային խոտերից, կարկանար յեղած հացա-
բույսերից, մի խոսքով՝ այն բոլոր բուսական
մնացորդներից, վորոնց դժվար ե կամ ձեռն-
տու չե չորացնել և պահել իրեն կեր:

Սովորաբար կարտոֆիլը հավաքելիս նբա-
կանաչ տերեվները չորանում են յեվ դառ-
նում բոլորովին անպետք իրեն կեր: Փորձը
ցույց ե տվել, վոր կարտոֆիլը հավաքելուց
7-10 որ առաջ կարելի յե նրա կանաչ մասերը
քաղել և պատրաստել սիլոս: Այդ բանը կար-
տոֆիլի բերքի յեվ վորակի վրա չի ազդում:
Յեթե նույն անեն մեր կոլխոզներն ու սով-
խոզները, դրանով բավականի կավելացնենք
անաստների ձմեռվա կերի պաշտուը:

Սակայն սիլոս պատրաստելու համար
միայն վերեւում հիշված մնացորդներով չի
կարելի բավականանալ, մանավանդ վոր նը-
րանք մշտական և փառահելի մատերիալ չեն:

Ցերաշտը և մյուս անբարեհաջող կլիմայական
պայմանները կարող են մեզ զրկել այդ նյու-
թերից: Անհրաժեշտ է սիլոսի համար հատուկ
բույսեր մշակել: Այդ նպատակով մշտիվում
են շատ կանաչ մասսա տվող բույսեր, որինակ,
յեղիպտացորեն, արևածաղիկ, կորեկ, սոր-
դու, սուղանի խոտ և այլն: Դրանցից ստաց-
վում ե մեծ քանակությամբ սիլոսացու կա-
նաչ մասսա (Հեկտարից 20-25 տոնն:):

Մեծ հաջողությամբ կարելի յե սիլոսել
յերեքնուկը, առվույտը, վիկա-վարսակի
խառնուրդը և այլն, վորոնցից խոնավ անձրե-
վային չքջաններում լավ չոր խոտ չի ստաց-
վում, իսկ չորացնելիս ել հաճախ կորցնում
են իրենց սննդարար և քնքուշ մասերը:

Կարելի յե սիլոս պատրաստել նաև աշնա-
նացան հացահատիկների ծղնութից կամ դար-
մանից, վորը շատ կոպիտ և դժվարամար ե
և այդ պատճառով անասունները ախորժակով
չեն ուտում: Սիլոսելու դեպքում նա դառնում
ե բավականի համեղ կեր և իր սննդով հաս-
նում ե մարզագետնի միջակ տեսակի խոտին:
Կարտոֆիլը, գետնախնձորը և շաղդամը նույն-
պես կարելի յե սիլոս դարձնել. դրա համար
հարկավոր ե նրանց մանրացնել: Կարտոֆիլը
ձեռնտու յե սիլոսել միայն այն դեպքում,
յերբ նա թեթև կերպով ցըտահար ե յեղել:
Այն չքջաններում, վորուեղ աշունը տաք ե և
յերկարատև, կարելի յե աշնանացանքուը հեր-
կելուց հետո անմիջապես ցանել վիկ, կորեկ,

յեղիպահացորեն, սորդո կանաչ մասսա ստա-
նալու և սիլոս պատրաստելու համար: Այդ
բույսերը կարելի յե շանել դաշտը միայն մեկ
անդամ փոցինելուց հետո: Այս բոլորը շատ
ժամանակ և աշխատանք չի խլի, սակայն
անասունները կապահովվեն ձմեռվա կերով:

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԿԱՆԱՉ ՄԱՍՍԱՆ ՍԻԼՈՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Անհրաժեշտ ե, վոր սիլոսելու համար
քաղված կանաչ մասսան հորի կամ աշտարա-
կի մեջ լեցվի թարմ գրությամբ, իսկ յեթե
շատ ջրալի յե, կարելի յե մի քիչ թողնել,
վոր թառամի: Յեթե նա յերկար ժամանակ
թափթփված մնում ե վոսի մեջ, տաքանում
և փչանում: Կարեռ և սիլոսացու կանաչ
մասսան, առանձնապես արեածաղկի, յեղիպ-
տացորենի ցողունները, կաղամճի ու կար-
տոփիլի տերեններն անպայման մանրացնել 2-5
անտիմետր յերկարությամբ: Մանրացնել
կարելի յե կամ հատուկ սիլոսահատ մեքենայի
կամ ծղոտահատ գործիքի միջոցով: Հա-
կառակ դեպքում կարելի յե մանրաց-
նել կացինով կամ բահով: Անհրաժեշտ ե ման-
րացնել նաև կարտոփիլը, ճակնդեղը, դղու-
մը՝ արմատակոտոր գործիքով կամ բահով,
կացնով և այն: Շատ հաճախ սիլոսացու մաս-
սան, առանձնապես կարտոփիլի և ճակնդեղի
տերեկները, բանջարանոցի մնացորդները

ծածկված են լինում հողով, ավագով: Այս
կողմնակի խտոնուրգներն ընկնելով սիլոսի
մեջ, իջեցնում են սիլոսի վորակը, և կերակրե-
լիս կենդանիների մեջ կարող են լուրջ հիվան-
դություններ առաջանալ:

Սովորաբար սիլոսի հորի մոտ գնում են
1 և կես մետր բարձրությամբ փայտից շին-
ված սանդուխք և կանաչ մասսան նրա վրա
թափ տալով ազատում են նրան ցեխից և ավա-
զից: Կանաչ մասսան մանրացնելու նպատակն
այն է, վոր նա հորի մեջ ավելի պինդ նստի և
այնտեղ ող քիչ մնա: այդ դեպքում սիլոսն
ավելի լավ կթթվի: Բացի դրանից մանրաց-
րած սիլոսն անասունները ամրողավին կու-
տեն և թերմացք չի մնա: Լավ վորակի սիլոս
ստանալու համար անհրաժեշտ ե, վոր կանաչ
մասսան ունենա 65-70 տոկոս խոնավություն:
Խոնավությունը կարելի յե վորոշել յերկու
կերպ: Առաջին ձեռ այն է, յերբ վերցնում են
մի փունջ կանաչ մասսա և յերկու ձեռքով շատ
ուժեղ քամում են: Յեթե փունջը կտրավում
է, նշանակում ե, վոր կանաչ մասսան բավա-
կան չորացել ե և սիլոսելու համար այնքան
ել հարմար չե. յեթե քամելիս ջրի կաթիլներ
են դուրս գալիս և թափվում գեանին, նշանա-
կում ե մասսան շատ խոնավ ե. իսկ յեթե քա-
մելիս ջրի կաթիլներ դուրս են գալիս, բայց
դետնին չեն թափվում, նշանակում ե, վոր
կանաչ մասսայի խոնավությունը միանգա-
մայն բավարար ե: Խոնավության աստիճանը

վորոշելու յերկրորդ ձևն այս ե. վերցնում են մեկ կիլոգրամ սիլոսացու բույսից, փռում են արեկի տակե և լավ չորացնում, հետո նորից են կշռում, յեթե նախկին քաշի հետ համեմատած 50 տոկոսով քաշը պակաս ե, նշանակում ե խոնավությունը բավարար ե սիլոսելու համար: Յեթե ստացվի ավելի չոր մասսա, նշանակում ե խոնավությունը ցածր ե, իսկ յեթե քիչ չոր մասսա, ուրեմն խոնավությունը բարձր ե: Յեթե սիլոսում են զանագան՝ բույսեր իրար խառնած՝ շատ ե քիչ խոնավությամբ, այդ դեպքում ավելի նպատակահարմար ե դարսել շերտերով՝ մեկը քիչ խոնավից, մյուսը շատ խոնավից: Յեթե սիլոսում են շատ ջրառատ բույսեր, որինակ, կաղամթի, արմատապտուղների տերեները, վորոնց խոնավությունը հասնում ե մինչեւ 90 տոկոսի, հարկավոր ե նրանց վրա ավելացնել կիսով չափ ավելի չոր մասսա, որինակ, ծղնոտ կամ դարման, այն ժամանակ խառնուրդի միջին խոնավությունը կդառնա մոտավորապես 65 տոկոս: Յեթե տնտեսության մեջ հյութալի մասսա չկա և ստիպված ենք սիլոսել բացառապես չոր մասսան, ավելի լավ ե բոլորովին չսիլոսել, վորովհետեւ ջուր ավելացնելու միջոցով շատ դժվար կլինի լավ սիլոս ստանալ: Այսպիսով ուրեմն կանաչ մասսան սիլոսելու համար պատրաստելիս պետք ե հիշել հետեւյալ կանոնները:

1. Կանաչ մասսան մանրացնել 2-5 սանտմ. յերկարությամբ:

2. Մաքրել հողից ու կողմնակի խառնութեց:

3. Ստուգել և կանոնավորել խոնավության աստիճանը:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱՆԱՉ ՄԱՍՍԱՆ ՀՈՐԻ ՄԵԶ ԼՅՆԵԼ

Անհրաժեշտ ե նախ քան կանաչ մասսան լցնելը հորի պատերը թեթև կերպով թրջել:

Մանրացրած սիլոսային մասսան հորի կամ աշտարակի մեջ ե լցվում շերտ-շերտ և տրորվում: Վորքան լավ ե մանրացրած մասսան, այնքան լավ ե տրորվում ու նստում: Տրորել պիղացնել կարելի յե կամ վոտներով կամ հատուկ գործիքներով: Վորքան մասսան պինդ ե նստում, այնքան քիչ ող ե մնում սիլոսի մեջ և դրա հետեւանքով սիլոսն ավելի հաջող ե դուրս գալիս: Առանձնապես պինդ պետք ե տրորել պատերի մոտերքը, վորտեղ ավելի շատ ող ե մնում: Յերբ սիլոսի մեջ ող շատ ե մնում, այնտեղ զարգանում են այնպիսի բակտերիաներ, վորոնք առաջացնում են քացախաթթու և դրանից սիլոսի համն ու հոտը փշտնում ե: Յեթե սիլոսում ենք աարեր խոնավություն ունեցող բույսեր, այսինքն մեկը չոր, մյուսը թաց, այդ գեղղում պետք ե լցնել խառը՝ մեկ շերտ չոր, մեկը թաց, կամ թե հորի հատակին լցնել չորը, իսկ վերեկից ավելի հյութալին: Յեթե չորը, իսկ վերեկից ավելի հյութալին: Յեթե չորը, իսկ վերեկից ավելի հյութալին:

մետք հաստության շերտերով. ավելի հաստ շերտ գարման լցնել չփ թույլաւրվում, վորով հետեւ նրա ցողունների մեջ կա շատ ող, և վորքան ել տրուխնք-պնդացնենք, դարձյալ վորոշ քանակությամբ ող կմնա, վորը հետազայռում կարող ե վատ ազդել սիլոսի վարակի վրա: Այսպես շերտ-շերտ լցնում են մինչև հորի բերանը, ելի տրորում-պնդացնում են և ելի կանաչ մասսա յեն լցնում վերեվից՝ կեսից մեկ մետք հաստությամբ, նայած հորի խորությանը, վորովհետեւ չնայած, վոր կանաչ մասսան հորի մեջ լցնելիս պինդ տրորում ենք, բայց և այնպես նա ելի նստում-ի շնուր ե: Այլպես լցրած թողնում են 1-2 որ, վորի ընթացքում մասսան բավականի նստում ե. գրանից հետո կրկին մասսա յեն ավելացնում-տրորում և իշխող ծածկում են թրջած դարմանով (մոտավորապես 15-25 սանտ. շերջով): Դրա համար լավ կլինի վերցնել մաքուր աշնան դարման և լավ թրջել ջրով:

Դարմանի վրայից լցնում են սկզբում մոտ 25 սմ. շերտ կավ և ապա կես մետր շերտ փուլսը հող, հաղով ծածկում են վոչ միանգամից, այլ միքանի ընդմիջումներով. միաժամանակ անհրաժեշտ ե հետեւել, վոր հողի շերտի վրա ճեղքվածքներ չառաջանան, պետք ե խսկույն և յեթ ծածկել և թույլ չտալ, վոր սիլոսի մեջ ող թափանցի:

Հորը լցնելու հետ միաժամանակ կերն ըսկում և տաքանալ: Նայած թե ինչ յեղանա-

կով են սիլոսը պատրաստել, ըստ այնո՞ւ ել լինում և տաքության տոտիճանը:

Զերմության աստիճանը չումար կա չափազանց հասարակ միջոց: Դրա համար վերցնում են 1 և կես սանտիմետր հաստությումք սրածայր յերկաթե ծող և խրում են հորի մասսայի մեջ. վորոշ ժամանակից հետո ձողը դուրս են քաշում ու ձեռքով փորձում: Յեթե ձողն այնքան է տաք, վոր ձեռքն այրում ե և անհնար և պահել, նշանակում ե ջերմությունը շատ բարձր ե, իսկ յեթե հաղիվ ե ձեռքը տաքացնում, ուրեմն ջերմությունը չտուփանց ցածր ե: Սիլոսին նպաստավոր չերմությունը պետք ե լինի այնքան, վոր դուրս հանած ձողը դժվարությամբ կարելի լինի պահել ձեռքում: Յեթե ջերմությունը շատ ե բարձր, կարելի յէ իջեցնել՝ հորի մասսան նորից տրորելու և ողը հեռացնելու միջոցով: Իսկ յեթե ջերմությունը ցածր ե, այն ժամանակ հարեկավոր ե մի առ ժամանակ դադարեցնել նոր մասսա լցնելը և հնարափորություն տալ, վոր լցված մասսան քիչ տաքանա և ապա շարունակել լցնել:

Այս բոլորից յերեւում ե, վոր սիլոսը լցնելիս, բացի համաշաբաթ աշխատանք կամարելուց, պետք ե նաև խնամքով հետեւել նրա ջերմությունը: Հորը լցնելուց 3-4 որ հետո տաքությունն սկսում ե շատ բարձրանալ: Պետք ե ոշխանել, վոր տաքությունը 52 աստիճանից չանցնի և 21 աստիճանից չինի:

ԱԱՐԵԼԻ՞ ՅԵ ԱՐԴՅՈՒՔ ՍԻԼՈՍԻ ՀՈՐԸ
ԼՑՆԵԼԻՄ ԸՆԴՄԻԶՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ

Սովորաբար չի հաջողվում հորը կամ կեսաշարակը մի որվա ընթացքում լցնել, և դա առանձնապես անհրաժեշտ էլ չե: Սիլոսը լցնելիս կարելի յե 1-2 որով ընդմիջում անել: Յերբ հորը բոլորովին լցվում ե, պետք ել վերնի շերտը լավ տրուել-նստեցնել, վորից հետո սիլոսը կարելի յե միաժամանակ բաց դրությամբ թողնել: Սակայն անձրև կամ ձյուն վոչ մի դեպքում չպետք ել թափվի բաց սիլոսի մեջ: Ահա այսպիսի դեպքերում ծածկոցը կարող է ցույց տալ մեծ ողնություն և սիլոսի հորը պաշտպանել անձրեվից: Յեթե սիլոսի լցնելը ինչ-ինչ պատճառներով 2-որից ավելի յե ընդհատվում, այն ժամանակ պետք ե սիլոսը մի լավ տրորել-պնդացնել և ծածկել դարձանի հաստ շերտով: Աշխատանքը վերսկսելիս ծածկոցը վերցնում են և վերջացնում հորի լցնելը,

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՀԱՆԵԼ ՍԻԼՈՍԸ
ՀՈՐԻՑ

Սովորաբար սիլոսը պատրաստ ե լինում 1-2 ամիս հետո, նայած թե ինչ բույսից ե պատրաստած: Յերբ արդեն պատրաստ ե, կարելի յե հանել և ուտեցնել անասուններին: Լավ կլինի բաց անել և կերցնել ցրտերն ընկնելուն պես: Անհրաժեշտ ե սիլոսից ամեն անգամ վերցնել այնքան, վորքան վոր հարկավոր ե որ-

վա մեջ անասուններին կերցնելու համար: Յերեւեկում ե ավելի, քան այն որը հարկավոր է, ավելորդը դուրսը մնալով և ողի հետ շըմերե, ավելորդը դուրսը մնալով փշանում ե: Հորից սիրելով, արագ կերպով վշանում ե: Հորից սիրելով, արագ կերպով վերալի կերպ. քանդում են լոս հանում են հետեւյալ կերպ. քանդում յերեսի հողը, դեն են դցում վերեկի շերտը, վորը կարող ե փշացած լինել. վերցնում են վորը կարող ե փշացած լինել. վերցնում են որվա բաժինն ամեն անգամ ամբողջ շերտի մակերեսից Յ անտ. վոչ պակաս: Հորի վորեկ մակերեսից կամ կողքից սիլոս հանել և փոս անակյունից կամ կողքից սիլոս հանել և փոս անակյունից կամ կողքից սիլոս հանել չի կարելի: Հանելուց հետո հարկավոր ե նել չի կարելի: Հանելուց հետո հարկավոր ե նել չի կարելի: Վորպեսզի որ չանցնի սիլոս իմաստ քով ծածկել, վորպեսզի որ չանցնի սիլոս մեջ: Այս դեպքում սիլոսը չի փշանա և կըսի մեջ: Այս դեպքում սիլոսը չի փշանա և կըսի մեջ:

ՎՈՐ ԱՆԱՍՈՒՆԵՐԻՆ ՅԵՎ ԻՆՉՓԱՆ
ԿԱՐԵԼԻ ՅԵ ՍԻԼՈՍ ՏԱԼ

Սիլոսը վորպես հյութալից կեր ամենից ավելի ձեռնտու յե կերցնել նախ կաթնատու անասուններին, ապա չաղացվող անասուններին: Կարելի յե կերցնել նաև ուրիշ տեսակի անասուններին: Անհրաժեշտ ե անասուններին քիչսուններին: Յերբ առաջին անքից սովորեցնել սիլոսին: Յերբ առաջին անքամ միանգամից չատ ենք տալիս, ազդում ե նրանց ստամոքսի վրա և փորլուծ ե առաջ գալիս: Պատահում ե, վոր անասունները սկզբում ըրլորովին սիլոս չեն ուտում կամ չատ տհաճությամբ են ուտում: Պետք ե ամեն կերպ աշխատել, վոր նրանք սովորեն ուտել: Յերբ մի քանի որ ուտում-ընտելանում են այդ կերին,

այնահետեւ մեծ ագահությամբ են լրա
պըծնում:

Չի կարելի անասուններին միմիայն սիլո-
սավ կերակրել. անհբաժեշտ և անպայման տալ
նաև կոպիտ կերեր՝ խոտ, դարման և ուժեղ
կերեր: Կաթնատու կովերին սիլոս պետք և տալ
միայն կթելուց հետո, վորովհետեւ նրա հոտը
շատ չուտ և անցնում կաթին: Ուտելուց հետո
պետք և մաքրել մսուրները, հեռացնել թեր-
մացքը և բաց անել զոմի լուսամուտները,
վորապեսզի ողը մաքրվի: Հղի կովերին ծնելուց
1 և կես-2 ամիս առաջ լավ կլինի բոլորովին
սիլոս չտալ: Կաթնատու կովին կարելի յե տալ
որական 10-20 կիլո: Հորթերին կարելի յե ըս-
կըսել սիլոս տալ 6-7 ամսական հասակից՝ ո-
րական 4-5 կիլո: Թե հղի կովերին և թե հոր-
թերին սիլոս կերցնելիս անհրաժեշտ և ավե-
լացնել ծեծած կավիճ որական 2-3 հացի գը-
դալ, վորապեսզի սիլոսի թթվությունը թուլա-
նա: Զաղացվող յեզներին կարելի յե տալ որա-
կան 10-20 կիլո սիլոս:

Հասակ առած վոչխարներին ու այծերին
կարելի յե սիլոս տալ որական 1-2 կիլո և
պետք և սովորեցնել քիշքիչ տալով: Չիերին
կարելի յե տալ միայն շատ լավ վորակի սիլոս:
Պետք և սովորեցնել քիչ քանակությունից ըս-
կըսելով և հասցնել 6-8 կիլոյի:

Հասակ առած խողերին նույնպես պետք և
տալ շատ լավ վորակի սիլոս մինչև 1,5 կիլո:
Յերթնջներին և արջառներին կարելի յե տալ
որական 7-8 կիլո սիլոս:

ԿԱՐԵԼԻ ՑԵ ԱՐԴՅՈՒ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ՍԱՌԱԾ ՄԻԼՈՍ ԿԵՐՑՆԵԼ

Ովստ ցբաերի ժամանակ յերբեմն սիլոսի
վերին չերտը սառչում է: Փորձերը ցույց են
տվել, վոր կարելի յե առանց վորեւե վտանգի
անասուններին սառած սիլոս տալ: Միայն հար-
կավոր և նախապես սառույցը հալեցնել և ա-
պա տալ: Պետք և հիշել, վոր հալցրած սիլոսը
շատ չուտ փշանում է, այնպես վոր հալչելուց
հետո ամբողջապես պետք և կերցնել և յերկար
ժամանակ բաց ողում չպետք և թողնել:

ԱՌՅՈՒՍԱԿ

Վարոշելու համար հորերի ու կիսատշտարակների ծավալը և նրանց տարողությունը (տոններով).

Բարձ.	Տ ք ա մ ա գ ի ծ ը մ ե ա ր հ ր ո զ							
	մետր	2,5	3,0	3,25	3,5	3,75	4,0	4,25
3	14,75	21,2	—	—	—	—	—	—
	9,3	13,5						
3,5	17,2	24,7	28,9	33,6				
	11,0	15,7	18,4	21,5	—	—	—	—
4,0	19,6	28,2	33,1	38,4	44,3	50,3		
	12,6	18,0	21,2	24,5	28,3	34,1	—	—
4,5	22,0	31,8	37,3	43,3	49,9	56,5	63,4	71,5
	14,0	20,3	23,8	27,6	31,2	36,1	40,5	45,7
5,0	—	35,3	41,4	48,1	55,4	62,8	70,4	79,5
		22,5	26,4	30,7	35,4	40,1	45,0	50,8
5,5	—	38,9	45,6	52,9	61,0	69,1	77,5	87,4
		24,8	29,2	33,8	39,0	44,1	49,6	55,9
6,0	—	42,4	49,8	57,7	66,2	75,4	85,0	95,4
		27,1	31,8	36,8	42,3	48,2	54,4	61,0
6,5	—	—	53,9	62,5	71,7	81,7	92,2	103,3
			34,4	40,0	42,6	52,2	59,0	66,0
7,0	—	—	67,3	77,2	88,0	99,2	111,3	
				43,6	49,4	56,3	63,5	71,2
7,5	—	—	—	82,8	94,2	106,3	119,2	
					53,0	60,3	68,0	76,2
8,0	—	—	—	—	—	—	127,2	
							81,3	

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — 1) Յուրաքանչյուր վանդակի վերևի թիվը ցույց և առկի ծավալը, իսկ ներքեւ թիվը՝ տարողությունը առներում:

2) 1 խոր, մետրի տարածությունը վերցրած է 0,8 առն, իսկ մեջ պայմաններում տարածությունը՝ նայած մոտութիւն, տառանվում է 0,6 և 0,8 ու. միջի:

ՀԵՇԻՐ ՄԻԼՈՍԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՅԵՎ ՈԳՏԱ-
ԳՈՐԾՄԱՆ ԱՅՍ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Սիլոս կարելի յե պատրաստել զանա-
ղան տեսակի բույսերից, նույնիսկ այնպիսի-
ներից, վորոնց անասունը թարմ վիճակում չի
ուտում:

2. Զպետք ե թողնել, վոր տնտեսության
մեջ յեղած մնացորդները փշանան կամ դեն
գցվեն: Պետք ե հավաքել և նբանցից պատրաս-
տել սիլոս այս գրքույկում հիշված յեղանա-
կով: Սիլոսնելիս այդ մնացորդներից կտացվի
սննդարար և հյութալի կեր:

3. Լավ սիլոս ստանալու համար անհրա-
ժեշտ ե, վոր հորի կամ կիսաաշտարակի պա-
տերը լինեն հարթ, ուղիղ և ավազված:

4. Սիլոսի հորը պետք ե պատրաստել բարձ-
րագեր աեղում, վորպեսզի ձյան և անձրեվի
ջրերը հոսեն գնան և հորի մեջ ըլցվեն: Հենց
այդ նպատակով ել անհրաժեշտ է հորի շուրջը
առու փորել: Անձրեվից և սառնամանիքից
պաշտպանելու համար հորի վրա պետք ե շինել
ծածկոց:

5. Սիլոսացու բույսերը պետք ե նախա-
պես մաքրել հողից և ուրիշ կողմնակի նյութե-
րից, ապա մանրացնել 2-5 սանտոմ. յերկարու-
թյամբ և շիրտ-շերտ լցնել հորի մեջ ու արո-
բել-պնդացնել:

6. Հորի մեջ լցված մասսան պետք ե արո-
բել ու նստեցնել, վորպեսզի նրա մեջ շատ քիչ

ող սնում: Յերբ ող շատ է մնում, սիլոսը փչա-
նում է:

7. Յեթե սիլոսում են տարբեր խոնավու-
թյուն ունեցող կերեր (մեկը թաց, մյուսը չոր),
ոյդ գեղքում պետք է հերթով լցնել մեկ շեր-
տը չորից, մյուսը՝ թացից: Սիլոսի խոնավու-
թյունը պետք է լինի 65 տոկ. մինչև 70 տո-
կոս (100 մասից 65-70 մասը ջուր):

8. Սիլոսի հորը կամ աշտարակը լցնելիս
ընդմիջում կարելի յե անել, բայց 1-2 որից
վոչ ավելի:

9. Հորից կամ աշտարակից սիլոսը պետք
ե հանել լրիվ շերտերով. կիսատ շերտով կամ
մի կողքից հանել չի կարելի: Հանելուց հետո
հարկավոր է հորը ծղոտով լավ ծածկել, վոր
ող չթափանցի: Յերբեք չի կարելի որվա պա-
հանջից ավելի սիլոս հանել հորից:

10. Անհրաժեշտ է անասուններին աստի-
ճանաբար սովորեցնել սիլոսին:

11. Կովերին սիլոս պետք է տալ միայն կը-
թելուց հետո:

12. Սիլոսն ուտելուց հետո պետք է անպայ-
ման մսուբները մաքրել, սիլոսի մնացորդները
դուրս թափել և դոմի ողը փոխել: Չի կարելի
դոմում սիլոսի պաշար պահել:

13. Վոչ մի գեղքում չի կարելի անասուն-
ներին տալ փչացած, փտած և բորբոսնած սի-
լոս:



ՀՀ Ազգային գրադարան



NL0957061

ԳԻՒԾ 5 ԿՈՊ (1 մ.)

1
2814



Ա. ՃԱՆԻԵԼ ԲԵԿ

СИЛОС—ТРАКТОР
ЖИВОТНОВОДСТВА

Госиздат ССР Армении
Эривань—1931